

ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՎԵՐ՝ ՎԱՀԱՆ ԹՈՒԹԻԿԵԱՆ

Պատմական անուրանալի իրողութիւն մըն է որ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին ծնունդ առաւ Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցիի ծոցին մէջ՝ 1 Յուլիս 1846ին, Կոստանդնուպոլիսի (այժմ Իսթանպուլ) մէջ: Մինչեւ վերջերս պատմութեան յայտնի չէր հիմնադիր 37 այրերու եւ 3 կիներու ինքնութիւնը: Արդարեւ, ոչ մէկ պատմարան, հայ թէ օտար, տուած է մեզի անոնց լրիւ անուանացանկը: Կարգ մը աղբիւրներ կը յիշեն միայն այն անձերուն անունները որոնք ռահպիրանները եղած են Հայ Աւետարանական Շարժումին: Բայց այժմ ունինք անոնց բոլորին անունները:

Այս նոր տեղեկութիւնը կը հասնի մեզի ձեռագիր հին յուշատետրի մը միջոցաւ գոր վերջերս Վեր. Մովսէս Ճանպազեան, Գործադիր Վարիչը Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան, գտած է Իսթանպուլի Հայ Աւետարանական Եկեղեցիներէն մէկուն գետնայարկի պահարաններէն մէկուն մէջ՝ այդ Եկեղեցիին տուած իր հովուական այցելութեան ընթացքին: Վեր. Ճանպազեան կատարած է այս այցելութիւնը 1997ի ամրան շրջանին: Անոր խուզարկու աչքերէն չի վրիպիր այդ մաշած կողքով ու դժուարընթեռնելի օրագիր-յուշատետրը որուն բովանդակութիւնը խիստ կարեւոր յայտնութիւններ կը կատարէր Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիին ծագումին եւ կազմաւորման փուլերուն մասին: Այդ յուշատետրը իր արժանաւոր տեղը գտած է այժմ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան արխիւներուն մէջ:

Մեզի անծանօթ կը մնայ Յուշատետրին տէրը կամ հեղինակը, քանի որ ոչ մէկ յիշատակութիւն կայ այդ մասին: Սակայն, կ'ենթադրենք որ ան Վեր. Ստեփան Իւթիւճեանը ըլլալու է՝ Հայ Աւետարանական Շարժումին առաջին պատմագիրը: Քանի որ, Յուշատետրին առաջին քանի մը էջերը գրուած են իր կենսագրութիւնը եւ ուրիշ մանրամասն տեղեկութիւններ: Հեղինակը նաեւ շատ մօտէն ծանօթ ըլլալ կը թուի Աւետարանական Շարժումին առընչակից կարգ մը դէպքերու՝ ինչպէս էր Վեր. Իւթիւճեան: Գրութիւններուն լեզուն ու ոճն ալ կը յիշեցնեն զինք:

Յուշատետրի 59-63 էջերը գրաւող բաժինը կը վերաբերի Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիին ծնունդի սկզբնական փուլերուն: Ահա՛ այդ էջերը իրենց ամբողջական հարազատութեամբ:

**ԹԷ ԻՆՉՊԷՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԻ ՅԱԶԳԻՍ ՆԵՐԿԱՅ ԵՐՐՈՐԳ
ԲԱԺԱՆՈՒՄԸ**

Հայ Աւետարանական անուանեալ եղբայր յառաջագոյն քան իրենց կազմաւորութիւն իբրեւ առանձին կամ գատ հասարակութիւն եւ եկեղեցի. Բարեպաշտութեան Միաբանութիւն յորչորջմամբ ընկերութիւն մ'էին ու թէ մայրաքաղաքիս թէ ի գաւառս սուրբ Աւետարանի հոգեկեցոյց ճշմարտութեանց եւ վարդապետութեանց սիրող ու հետեւող ազգայինք որ ի սկզբանէ անտի միշտ եղեր են ու պիտի ըլլան յազգիս թէ կղերական թէ աշխարհական դասերէն, յորոց ոմանք անցեալ դարու առաջին քառորդէն սկսեալ ծանօթանալով իրարու հաստատած են վերոյիշեալ Բ.Մ. ընկերութիւնը:

Այդ ընկերութիւն[ը] տակաւ կ'ընդարձակի մինչեւ ի գաւառս ուր ուրեք որ կը գտնուէին նոյնին համամիտներ. նպատակնին ըլլալով ո'չ այլ ինչ բայց միայն սատարել սիրեցեալ ազգիս լուսատրութեանն ու ճշմարտութեան գիտութեամբը ազատութիւն գտնելուն տգիտութեան ու մոլորութեան ճիւղաններէն: Թէպէտ ժամանակ ժամանակ ազգային իշխանութեան կողմէն հալածանք կը յարուցուէր ասոնց ու մինչեւ իսկ արքայանք, բայց արքայանք վերադարձուն դարձեալ նոյնն էին եւ առաւել եռանդաւորեալ. նոյն ատեն իբրեւ ազգային եկեղեցոյ գաւառներ կրնային վայելել անոր ամէն արտօնութիւններն:

Բայց 1840 թուականէն ետք ի ժամանակս Մատթոս պատրիարքի յարուցումը հալածանքն առաջիններէն շատ տարբեր եղաւ՝ Աւետարանական եղբայրներու ստիպում եղաւ ուրանալու իրենց համոզումներ, միկիական հանգանակէն անհունապէս տարբեր հաւատոյ հանգանակ մը մատուցուեցաւ անոնց ընդունելու եւ ստորագրելու զոր պատրաստած էր տգէտ պատրիարքն համախոհութեամբ ճիզուիքաց հացովը ասպող Տերոյեանց Չամբուրճեան կոչեցեալ անձին, մասնատրապէս Աւետարանկանաց համոզումներուն դէմ շարադրուած, զոր ո'չ մէկ լուսատրեալ ու երկիւղած որ կրնայ ընդունիլ եւ ստորագրել: Հետեւաբար բազումք բանադրուեցան ու կտրուեցան իրենց սիրեցեալ եկեղեցիէն որոյ բարեկարգութեանն ու սրբութեանը համար այնքան կը ճգնէին եւ կ'աղօթէին: Եւ շատերուն չարչարանքն ու նեղութիւնը մեծ էր արդարեւ, մասնաւանդ գաւառաց մէջ ի ձեռն անագորոյն տգէտ առաջնորդներու:

Արդ՝ ասոնք որ հիմա զրկուած էին ազգային, եկեղեցական ու քաղաքական ամէն արտօնութիւններէ, կրօնի մասին անհոգ ու անտարբեր կամ անհաւատ մարդիկ չէին որ շարունակէին երկար ատեն մնալ այսպիսի կացութեան մէջ: Ուստի ազատութեան համար նախ ազգային իշխանութեան եւ մեծամեծաց աղերսելէ յետոյ երբ անլսելի եղաւ, դիմեցին օսմանեան մեծագոր տէրութեան եւ իրենց հոգեւոր ու եկեղեցական եւն, արտօնութիւնք եւս վայելելու համար որոշեցին Քրիստոսի ուղղափառ առաքելական եւ ընդհանրական Ս. եկեղեցոյն հետ միանալ որ ամէն ազգէ եւ լեզուէ ճշմարիտ հաւատացեալներէ բաղկացեալ է Յայտ. 9-17:

Արդ, ըստ այդու որոշման տիար միսիոնարաց հետ խորհրդակցելով 1846 Յուլիս 1 - Նոր տոմար, Բերա անգղիական դեսպանատան դրան ձախակողմի պողոտային վրայ տիար Ն.Ճ.Օ. Տուայթի բնակած տան մատրան մէջ

Die Haupt- und Nebensachen sind die folgenden:

Einleitung

Das erste Hauptstück ist die Einleitung, in welcher der Verfasser die Wichtigkeit der Sache darlegt, und die Gründe anführt, weshalb er sich zu dieser Arbeit entschlossen hat. In demselben Stück wird auch die Methode angegeben, welche er bei der Bearbeitung der Sache beobachtet hat, und die Quellen angegeben, aus welchen er sich unterrichtet hat.

Das zweite Hauptstück ist die Darstellung der Sache selbst, in welcher der Verfasser die verschiedenen Theile der Sache einzeln darstellt, und die Zusammenhänge zwischen denselben zeigt. In diesem Stück wird auch die Geschichte der Sache erzählt, und die Veränderungen, welche sie im Laufe der Zeit erfahren hat, beschrieben.

Das dritte Hauptstück ist die Beurtheilung der Sache, in welcher der Verfasser die Vortheile und Nachtheile derselben abwägt, und seine eigene Meinung darüber äußert. In diesem Stück wird auch die Frage beantwortet, ob die Sache überhaupt zu thun ist, und wenn ja, unter welchen Umständen.

Das vierte Hauptstück ist die Zusammenfassung der Sache, in welcher der Verfasser die wichtigsten Punkte derselben nochmals zusammenfasst, und die Ergebnisse seiner Untersuchungen darlegt. In diesem Stück wird auch die Frage beantwortet, welche Lehren aus der Sache zu ziehen sind, und welche Vorkehrungen zu treffen sind, um die Nachteile derselben zu vermeiden.

Das fünfte Hauptstück ist die Schlussrede, in welcher der Verfasser seine eigenen Gedanken über die Sache äußert, und die Leser zu ähnlichen Untersuchungen ermahnt. In diesem Stück wird auch die Frage beantwortet, ob die Sache überhaupt zu thun ist, und wenn ja, unter welchen Umständen.

հանդիսական ուխտարարութիւն ընելու համար հաւաքուեցաւ Բարեպաշտութեան Միաբանութեան Կոստանդնուպոլսոյ ճիւղը, ի ներկայութեան ուրն միսիոնարաց որոց անուանք են.– պատուելիք Ա. Կոստէլ, Ռ. Ճ. Լափիլտ, Ն.Ճ.Ս. Տուայք, Կ. Համլին, Հոմա, Ասատ, Էւերէթ, ու Ալլէն՝ Սկովտիոյ ազատ եկեղեցոյ կողմէ հրէից միսիոնարն:

Սոյն միսիոնարք հարցում մը ըրին հաւաքեալ Աւետ[արանական] եղբայրներուն, ըսելով. «Դուք՝ որ հիմա եկեղեցի կազմուիլ կը փափաքիք, ո՞ր յարանուանութեան կ'ուզէք յարիլ»:

Այս պահուն Աւետարանական եղբայրց միասնական պատասխանը եղաւ. [«]մենք յարանուանութեան յարելու եկած չենք, բայց հայ ենք ու Հայաստանեայց եկեղեցոյ զաւակունք. Ս. Աւետարանը իբրեւ կանոն հաւատոյ եւ վարոց ճանչցանք եւ ընդունեցինք երբ դեռ նոյն մեր մայրենի եկեղեցոյ ծոցն էինք: Բայց այժմ մերժուեցանք անկէ անոր մէջ սպրդուած Աւետարանին դէմ կան հակառակ վարդապետութիւններն չընդունելնուս համար, եւ հիմա կրկին կ'ուզենք Հայաստանեայց եկեղեցի մնալ, բայց՝ «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի» ու այսպէս կազմուիլ եւ կոչուիլ. այն հաւատքով ու յոյսով որ մեր ազգային եղբարք օր մը իրենք եւս նոյն Աւետարանին աշակերտելով պիտի միանան մեր հետ:

Ներկայ պաշտօնեայք ուրախութիւն եւ հաճութիւն յայտնեցին այս պատասխանին, եւ Աւետ[արանական] եղբարք հանդիսատր ուրախութեամբ եւ աղօթիք կազմաւորեցան առաջի Աստուծոյ, ալ այնուհետեւ անուանուեցանք Հայաստանեայց Աւետ[արանական] Եկեղեցի:

Աստիկ նոյն ատր անդամոց անունք.

1. Պարոնայք Տէր Վրթանէս (Յովհաննէսեան – Վեր. Վ. Թ.)
2. Պարոնայք Արիստղոս Իրփիճեան
3. [Պարոնայք] Միմոն Իրփիճեան
4. [Պարոնայք] Ստեփան Իրփիճեան
5. [Պարոնայք] Սկրտիչ Ն. Աիլաճեան
6. [Պարոնայք] Սկրտիչ Քիրէչեան
7. [Պարոնայք] Ոսկան
8. [Պարոնայք] Արրիպաս Ժամագործ
9. [Պարոնայք] Եփրեմ Ժամագործ
10. [Պարոնայք] Աբրահամ Ժամագործ
11. [Պարոնայք] Պօղոս Ժամագործ
12. [Պարոնայք] Սարգիս Դարբինեան
13. [Պարոնայք] Պետրոս Գամաղիէլեան
14. [Պարոնայք] Պօղոս Գամաղիէլեան
15. [Պարոնայք] Յովսէփ Գամաղիէլեան
16. [Պարոնայք] Ասատուր Տէմիրճիպաշչեան
17. [Պարոնայք] Պետրոս Մինասեան
18. [Պարոնայք] Սարգիս Մինասեան
19. [Պարոնայք] Մահուտի Պօղոս Յովհաննէսեան
20. [Պարոնայք] Քազազ Յովակիմ Յովհաննէսեան

21. [Պարոնայք] Քազազ Յովհաննէս Կարճահասակ Քէլէշեան
22. [Պարոնայք] Ստեփան Սերովբեան (եղբայրը՝ Յակովբոս Պասորիարքին)
23. [Պարոնայք] Գաբրիէլ Չըպուրճի
24. [Պարոնայք] Մանուկ Նասալեան
25. [Պարոնայք] Գալուստ Ոսկերիչ
26. [Պարոնայք] Համբարձում Ոսկերիչ
27. [Պարոնայք] Կարապետ Միրիքէլեան
28. [Պարոնայք] Եղիսէ Տէմիրճիպաշլեանց
29. [Պարոնայք] Առաքել Եագմանը
30. [Պարոնայք] Յովհաննէս Նաշանը (ի պապականութենէ)
31. [Պարոնայք] Նշան Յովսէփեան
32. [Պարոնայք] Եղիա Կեսարացի Բաստրմաճի
33. [Պարոնայք] Կիրակոս Չմշկաժազցի Առաքելեան
34. [Պարոնայք] Պաղտասար Գրքաժախ
35. [Պարոնայք] Կոզմա Չըպուրճը
36. [Պարոնայք] Մահտէսի Կարապետ Բիրքճի
37. [Պարոնայք] Մահտէսի Պապա կոչեցեալ ոմն
38. Տիկին Սողոմէ Յովսէփեան
39. [Տիկին] Չանազան Ա. Իթիճեան
40. [Տիկին] Հոիփսիմէ Մ. Աիլաճեան

Յետ կազմաւորութեան կամ հաստատութեան այս եկեղեցոյ այլեւ այլ ճիւղերուն ի գաւառս, Տիար Ուիլիլմ] Կուտէլ հետեւեալն հրատարակեց Քրիստոնեայ աշխարհին, իբրեւ հայոց համար աշխատող առաջին միսիոնար Թուրքիոյ մէջ: «Մենք օգնեցինք Կոստանդնուպոլսոյ, Նիկոմիդիայի, Ատաբազարի եւ Տրապիզոնի մէջ՝ զանոնք (այսինքն Բարեպաշտական Միութեան անդամները) եկեղեցիներ կազմելու: Մենք իշխանութիւն (control) չունինք անոնց վրայ: Ամերիկայի [մէջ] եղած մեր եկեղեցեաց ոչ միոյն ճիշդ ձեւովը կազմաւորեցան, այլ [անընթ.] Նոր Կտակարանին ցոյց տուած ձեւին նայելով եւ իրենց հաւատոյ [անընթ.] նոյն են Ամերիկայի, Անգլիայի եւ Եւրոպայի կիսագումնային [անընթ.] եկեղեցիներուն ամէն մեծ ճիւղերուն դաւանածին հետ: Եւ այս եկեղեցիները կը ներկայենք ձեզի իբրեւ անդամք եւ յուսամ արժանաւոր անդամք մեծ բողոքական ընտանիքին¹:

Ազգային իշխանութեան կողմէ հալածանքը խստիւ շարունակուեցաւ շատ կերպերով մինչեւ 1847, որովհետեւ կառավարութեան առջեւ իբրեւ առանձին կամ ուրոյն ժողովուրդ ճանչցուած չէր դեռ այս ժողովուրդը հապա անուանապէս պատրիարքարանին իրաւասութեանը տակ կը գտնուէր. քէպէտ կառավարութեան պաշտօնատարներէն չափով մը պաշտպանութիւն կը վայելէր: Բայց վերոյիշեալ թուականի [այսինքն 1847ի – Վեր. Վ. Թ.] Նոյեմբերին մէջ Բարձր. Մեծ Եպարքոս Բեշիտ փաշայի կողմէ հրամանագիր մը տրուեցաւ քաղաքապետութեան ի պաշտպանութիւն հէզ ժողովուրդին: Այդ հրամանագիրը [ը] կայսերական հեղինակութիւն չունենալով, կրնար տեղ–տեղ զանց

առնուիլ վասն որոյ Սըր Սքրատֆորտ Քանինկի [Թուրքիոյ Բրիտանական դեսպան – Վեր. Վ. Թ.] միջնորդութեամբ Սուլթան Ապտըլ Մեճիտ կայսեր հեղինակութեամբ նոր հրամանագիր մը շնորհուեցաւ որ կը հաստատէր ժողովրդեան կազմակերպութիւնը իբրեւ ուրոյն քաղաքական ժողովուրդ [այսինքն. Բողոքական Միլլէթ – Վեր. Վ. Թ.], արտօնութեամբք համահաւասար ուրիշ ամեն հպատակ ազգաց եւ ժողովրդոց: 1850 Նոյեմբեր 15»:

«Նորին Կայսերական Վեհափառութեան՝ Սուլթան Ապտըլ Մեճիտ Խանի, Հայ Աւետ[արանական] ժողովրդեան շնորհած կատարեալ ազատութեան եւ ուրիշ հպատակ ազգաց եւ ժողովրդոց համահաւասար ամենայն արտօնութեանց վայելման հրամանագիրը, կամ իրատէն որ ի ձեռն Սըր Սքրատֆորտ Քանինկի է, ստանալու համար մասնաւոր հրատերքով 12 անձինք Թարապիոյ անգլիական դեսպանատունը գացին յամի տեառն 1850 Նոյեմբեր 20, որոց անունք են.

1. Տեարք Ստեփան Սերովբէեան եղբայր Յակովբոս պատրիարքի հայոց
2. [Տեարք] Տէր Վրթանէս Յովհաննէսեան
3. [Տեարք] Սարգիս Դարբինեան
4. [Տեարք] Սկրտիչ Ն. Ճիլանեան
5. [Տեարք] Չենոբ Նարկիլէճեան
6. [Տեարք] Մանուկ Նարլեան
7. [Տեարք] Պատ[ուելի] Սիմոն Իփիճեան
8. [Տեարք] Ստեփան Իփիճեան
9. [Տեարք] Ստեփան Անտոնեան
10. [Տեարք] Պետրոս Գամաղիլէեան
11. [Տեարք] Մ[ա]հտ[է]սի Պողոս Յովհաննէսեան
12. [Տեարք] Պողոս Աղամեան Ժամագործ

Ասոնք [հայ աւետարանական 12 պատուիրակները, անգլիական – Վեր. Վ. Թ.] դեսպանատան մեծ սրահին մէջ ընդունուեցան Նորին Վսեմութենէն, ապա իբրեւ կիսարդարակ մը շարուեցան որ[ու] ատեն Նորին Բարձր Վսեմութիւնը եւս հրամանագիրն ի ձեռին կը կանգնէր ճիշդ մէջտեղն երեսը անոնց ուղղած. եւ հարց մը ուղղեց անոնց թէ՛ «Հիմա որ դուք իբրեւ Օսմանեան մեծ տէրութեան հաւատարիմ հպատակներ կատարեալ ազատութիւն եւ անդորրութիւն պիտի վայելէք, ի՞նչ յարանուանութիւնով որոշած էք ճանչցուիլ Քրիստոնեայ աշխարհին մէջ»:

Ներկայից միասնական պատասխանը այս եղաւ. «Մենք որեւէ յարանուանութիւն չենք ընդունած կամ անոր յարած, այլ միայն Աւետարանն ենք ընդունած եւ անոր ենք յարած, եւ ուստի որոշած ենք Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի անուամբ ճանչցուիլ Քրիստոնեայ աշխարհին մէջ»:

Նորին բարձր վսեմութիւնը շատ հաւանեցաւ ներկայից այս պատասխանին եւ յառաջացաւ եւ իրաքանչիւրի ձեռքը թօթուեց ամենայն ուրախութեամբ ու ըսաւ. – «այս պատուական ու չնաշխարհիկ անունէն երբեք մի բաժ-

նուր և ջանացք օր քան զօր ատի համակերպիլ այդ սլատուական անունին
և իրօք ալ իրացնել ձեզի»: Ասլա հրամանագիրը յանձնեց:

ՃԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. *Ճորդի Եիրս ին Թրքիշ Էմբայր*. Գլ. ԺԷ. [անընթ.], 322, Ո. Կուտէլ: [Պէտք է ըլլայ] Prime, E.D.G. *Forty years in the Turkish Empire, or Memoirs of Rev. William Goodell, D.D.*, New York: Robert Carter & Bros., 1876: –Վ. Թ.]:

NEW DATA ABOUT THE FOUNDING OF THE ARMENIAN EVANGELICAL CHURCH AND ITS FOUNDING MEMBERS (Summary)

REV. VAHAN TOOTIKIAN

It is a well established historic fact that the Armenian Evangelical church originated in the bosom of the Armenian Apostolic church and was officially established on July 1, 1846. Nevertheless the full list of the founding members and the circumstances which led to its establishment were not detailed, due to unavailable information. Recently Rev. Movses Janbazian, the Executive Secretary of the Armenian Missionary Association of America, during his visit to Istanbul's Armenian Evangelical Churches, uncovered a memoir that lists the names of the founding members and details the events that preceded the official establishment and the handing of the *iradé* to the representatives of the group by Sultan Abdul Mejid II during a reception hosted by the Sir Stratford Canning, the British Ambassador at the Ottoman Empire.